

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության Բարեգործական սննդի գործառնությունների ուղեցույց

Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության վարչությունը հայցում է ձեր աջակցությունը Լոս Անջելեսի շրջանում նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու գործում: Ստորև ներկայացված խորհուրդները կօգնեն պահպանել ձեր աշխատակիցների և հաճախորդների առողջությունը:

Կամավորներ և աշխատակիցներ

- Հիվանդ աշխատակիցներին խորհուրդ է տրվում մնալ տանը և չվերադառնալ աշխատանքի մինչև նրանք ջերմություն չունենան առնվազն 72 ժամ շարունակ առանց ջերմիջեցնող դեղերի:
- Կամավորները և աշխատակիցները, որոնք հիվանդ կլինեն աշխատանքի ժամանման պահին կամ կհիվանդանան օրվա ընթացքում, պետք է անմիջապես տուն ուղարկվեն:

Հաճախորդներ, որոնք հիվանդության նշաններ ունեն

- Հիվանդ հաճախորդներին խորհուրդ տվեք մնալ տանը և խնդրել իրենց ընկերոջը կամ հարևանին բերել իրենց սնունդը:
- Նկատելի վայրերում փաքցրեք պաստառներ, որոնք խորհուրդ են տալիս հաճախորդներին մնալ տանը, եթե նրանք հիվանդ են, նույնիսկ թեթև
<http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/StayHome.pdf>
- Հաճախորդներին տրամադրեք հավելյալ թաշկինակներ կամ անձեռոցիկներ՝ հազալու կամ փռշտալու դեպքում օգտագործելու համար
- Համոզվեք, որ զուգարանները ապահովված են օճառով, մեկանգամյա օգտագործման սրբիչներով/չորացնող սարքերով և անհպում աղբարկղերով
- Խորհուրդ է տրվում հաճախորդներին ապահովել սպիրտային պարունակությամբ ձեռքերի ախտահանիչ միջոցներ՝ առնվազն 60% սպիրտի պարունակությամբ:
- Սովորեցրեք կամավորներին և աշխատակիցներին, որոնք պատրաստում կամ մատուցում են ուտելիքը, հնարավորինս պահել 6 ֆուլթ հեռավորություն իրենց և հիվանդ թվացող հաճախորդների միջև:

Ձեռքերի լվացման ցուցումներ

- Լվացեք ձեռքերը և թևերը օճառով և գոլ ջրով առնվազն 20 վայրկյանների ընթացքում նախքան՝
 - Ուտելը կամ խմելը
 - Ուտելիք պատրաստելը
 - Ձեռնոցներ հագնելը
 - Այնպիսի գործողություններից հետո, որոնք կարող են ախտոտել ձեր ձեռքերը
- [Փակցրեք ձեռքերը վանալու պաստառներ](#), որպես տեսողական հիշեցումներ:
- Խորհուրդ տվեք որպես հավելյալ գործիք օգտագործել ձեռնոցներ, բայց կարևոր է հիշել, որ ձեռնոցները չեն փոխարինում ձեռքերը լվանալու անհրաժեշտությանը և հիգիենայի պահպանմանը:

Նվիրաբերված մթերքի ընդունումը

- Անհատներից և մասնավոր տնային տնտեսություններից
 - Ընդունեք միայն չպատրաստված, նախապես փաթեթավորված մթերք անհատներից և մասնավոր տնային տնտեսություններից (ինչպիսին են պահածոյացված մթերքը, տուփերով նախաճաշերը և այլն):

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության Բարեգործական սննդի գործառնությունների ուղեցույց

- Սննդի մատակարարներից
 - Դուք կարող եք ընդունել ամբողջ պատրաստի ուտելիքը, նախապես փաթեթավորված ուտելիքը (բացառությամբ ժամկետանց մանկական կերերը և մանկական ուտելիքները) արտոնված սննդի մատակարարներից, ինչպիսին են ռեստորանները, հյուրանոցները, նպարավաճառները, սննդի վերամշակման օբյեկտները, սննդի մատակարարները և քեյթերինգ իրականացնողները:
 - Այն նվիրաբերված ուտելիքը, որին հարկավոր է ջերմաստիճանի հսկողություն, պետք է միշտ պահպանվի 41°F կամ ավելի ցածր ջերմաստիճանով տեղում՝ սառը մթերքի համար, կամ 135°F և ավելի բարձր տաք մթերքի համար, նախքան տեղափոխումը:
 - Նվիրաբերողին խնդրեք ապահովել մթերքի ջերմաստիճանը նախքան այն գործակալությանը առաքելը:
 - Մթերքը ստանալուն պես՝ գործակալության պատասխանատու անձը պետք է ստուգի մթերքի ջերմաստիճանը և արձանագրի ստացման ժամը:
 - Եթե նվիրաբերողը կամ մթերքը տրամադրող ընկերությունը առաքում է մթերքը սառցարան տրանսպորտի միջոցով, ապա սնունդը պետք է պահվի 41°F-ից ցածր ջերմաստիճանում գործակալությանը առաքելու ընթացքում:
 - Եթե նվիրաբերողը կամ սննդի վերամշակման ընկերությունը չի առաքել սառցարան տրանսպորտի միջոցով, ապա մթերքը պետք է պիտակավորվի «Մշակել անմիջապես» և դրա ջերմաստիճանը չպետք է մնա վերահսկողությունից դուրս 2 ժամից ավելի:
- Մի ընդունեք ժամկետանց մանկական կեր կամ երեխաների սնունդ:

Սննդի մատուցումը/Սննդի ընտրությունը

- Եթե ձեր գործակալությունը հաճախորդի ընտրության մոդելն է օգտագործում, ապա դիտարկեք նախնական տոպրակի մեջ դնելու տարբերակը: Տոպրակները կարելի է արագ փոխանցել և ավելի քիչ մարդիկ կդիպչեն սննդին:
- Եթե ձեր գործակալությունը որոշի պահպանել հաճախորդի ընտրության մոդելը, ապա պահանջեք հաճախորդներից, որպեսզի նախապես լվանան ձեռքերը և հագնեն ձեռնոցներ՝ նախքան իրենց ուտելիքը ընտրելը:
- Երկարացրեք ժամերը կամ լրացուցիչ օրեր նշանակեք, որպեսզի հաճախորդները կարողանան սովորել սոցիալական հեռավորություն պահելը տարածության մեջ կամ հերթում:
- Սահմանափակեք մարդկանց քանակը ուտելիքով ցուցափեղկի մոտ: Եթե ուտելիքով ցուցափեղկը փակ տարածքում է տեղակայված, ապա դիտարկեք այն տեղափոխել դուրս՝ հաշվի առնելով եղանակային պայմանները:
- Որտեղ հնարավոր է, ցանկալի է լինեն ձեռնոցներով մատուցողներ ուտելիքով ցուցափեղկի մոտ:
- Հերթ կազմելուց հաճախորդներին առաջարկեք ձեռքերի ախտահանիչ միջոցներ/անձեռնոցիկներ:
- Պարբերաբար սրբեք մակերեսներին թափվածը:
- Հաճախակի փոխեք սպասքը:

Ընդհանուր մաքրման աշխատանքներ

- Պատասխանատու կամավոր կամ աշխատակից նշանակեք սեղանների, սայլերի, դռների բռնակների, գրիչների, հեռախոսների, համակարգչային կետերի և այլ «հաճախակի հպման» մակերեսները օրվա մեջ պարբերաբար մաքրելու և ախտահանելու համար:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության Բարեգործական սննդի գործառնությունների ուղեցույց

- Օգտագործեք բնապահպանական գործակալության (EPA) կողմից գրանցված միջոց, որը մաքրում է (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (սպանում է մանրէները): Միշտ կատարեք միջոցների և ախտահանիչների պիտակների վրա նշված ցուցումները:

Արդյունավետ ախտահանիչներ

- Զլորային լուծույթ պատրաստելու համար, խառնեք 1 ճաշի գդալ քլոր և 4 բաժակ ջուր: Ավելի մեծ քանակություն պատրաստելու համար, խառնեք ¼ բաժակ քլորը 1 գալլոն (16 բաժակ) ջրի հետ: Օգտագործեք խառնուրդը 20 րոպեների ընթացքում:
- Այլ EPA-հաստատված ախտահանիչները կարող են օգտագործվել, եթե դրանք արդյունավետ են կորոնավիրուսների դեմ: Հաճախորդը կարող է կապ հաստատել ապրանքի պիտակի վրայի “1-800” հեռախոսահամարով, ճշտելու համար դրա արդյունավետությունը “COVID-19” դեմ:

Ախտահանիչների, իրերի և աղբի հետ ճիշտ աշխատելաձևը

- Զիմիական նյութերը օգտագործեք միայն լավ օդափոխվող վայրերում:
- Խուսափեք անհամատեղելի քիմիական նյութերը խառնելուց (կարողացեք պիտակները):
- Կանխեք քիմիական նյութերի շփումը մթերքի հետ մաքրման աշխատանքներ իրականացնելիս:
- Աղբը հավաքեք զգուշությամբ և թափեք համապատասխան աղբամանի մեջ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Տեղեկատու հեռախոսահամարով (888) 700-9995:

Covid-19 մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://publichealth.lacounty.gov>